

## **Համաշխարհային փոստային միության կանոնադրություն**

(փոփոխված՝ 1969 թվականի Տոկիոյի, 1974 թվականի Լոզանի, 1984 թվականի Համբուրգի, 1989 թվականի Վաշինգտոնի, 1994 թվականի Սեուլի, 1999 թվականի Պեկինի, 2004 թվականի Բուխարեստի, 2008 թվականի 24-րդ Համագումարի, 2016 թվականի Ստամբուլի, 2018 թվականի Ադիս Աբեբայի եւ 2021 թվականի Աբիջանի Լրացուցիչ արձանագրություններով<sup>1</sup>)

---

<sup>1</sup> 1969 թվականի Տոկիոյի Լրացուցիչ արձանագրության համար տե՛ս այդ Համագումարի փաստաթղթերը, հատոր III, էջ 9-12:

Երկրորդ Լրացուցիչ արձանագրության համար (Լոզան, 1974 թվական) տե՛ս այդ Համագումարի փաստաթղթերը, հատոր III, էջ 23-25:

Երրորդ Լրացուցիչ արձանագրության համար (Համբուրգ, 1984 թվական) տե՛ս այդ Համագումարի փաստաթղթերը, հատոր III, էջ 25-28:

Չորրորդ Լրացուցիչ արձանագրության համար (Վաշինգտոն, 1989 թվական) տե՛ս այդ Համագումարի փաստաթղթերը, հատոր III/1, էջ 27-32: Հինգերորդ Լրացուցիչ արձանագրության համար (Սեուլ, 1994 թվական) տե՛ս այդ Համագումարի փաստաթղթերը, հատոր III, էջ 25-29:

Վեցերորդ Լրացուցիչ արձանագրության համար (Պեկին, 1999 թվական) տե՛ս 1999 թվականին Բեռնում հրատարակված տեղեկաթերթիկի Ա 3-ից Ա 6-րդ էջերը:

Յոթերորդ Լրացուցիչ արձանագրության համար (Բուխարեստ, 2004 թվական) տե՛ս 2004 թվականին Բեռնում հրատարակված տեղեկաթերթիկի 3-ից 7-րդ էջերը:

Ութերորդ Լրացուցիչ արձանագրության համար (24-րդ Համագումար, 2008 թվական) տե՛ս 2008 թվականին Բեռնում հրատարակված տեղեկաթերթիկի 3-ից 7-րդ էջերը: Իններորդ Լրացուցիչ արձանագրության համար (Ստամբուլ, 2016 թվական) տե՛ս 2016 թվականին Բեռնում հրատարակված տեղեկաթերթիկի 7-ից 13-րդ էջերը:

Տասներորդ Լրացուցիչ արձանագրության համար (Ադիս Աբեբա, 2018 թվական) տե՛ս 2018 թվականին Բեռնում հրատարակված տեղեկաթերթիկի 5-ից 8-րդ էջերը:

Տասնմեկերորդ Լրացուցիչ արձանագրության համար (Աբիջան, 2021 թվական) տե՛ս նույն տեղեկաթերթիկի 5-ից 12-րդ էջերը:

Բովանդակություն

Նախաբան

Բաժին I

Հիմնական դրույթներ

Գլուխ I

Ընդհանուր դրույթներ

Հոդված

1. Միության գործունեության ոլորտը եւ նպատակները
2. Սահմանումները
3. Միության անդամները
4. Միության իրավասությունները
5. Բացառիկ հարաբերություններ
6. Միության գտնվելու վայրը
7. Միության պաշտոնական լեզուն
8. Դրամական միավորը
9. Տարածաշրջանային միություններ: Հատուկ համաձայնագրեր
10. Հարաբերությունները Միավորված ազգերի կազմակերպության հետ
11. Հարաբերությունները միջազգային կազմակերպությունների հետ

## Գլուխ II

Միությանը միանալը կամ Միություն ընդունվելը: Միությունից դուրս գալը

12. Միությանը միանալը կամ Միություն ընդունվելը: Ընթացակարգը
13. Միությունից դուրս գալը: Ընթացակարգը

## Գլուխ III

Միության կառուցվածքը

14. Միության մարմինները
15. Համագումարը
16. Արտահերթ Համագումարը
17. Վարչական խորհուրդը
18. Փոստային շահագործման խորհուրդը
19. Միջազգային բյուրոն

## Գլուխ IV

Միության ֆինանսները

20. Միության ծախսերը: Անդամ երկրների անդամավճարները

## Բաժին II

### Միության փաստաթղթերը

#### Գլուխ I

#### Ընդհանուր դրույթներ

21. Միության փաստաթղթերը
22. Միության փաստաթղթերի կիրառումն այն տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է անդամ երկիրը
23. Ազգային օրենսդրությունը

#### Գլուխ II

#### Միության փաստաթղթերի ընդունումը եւ չեղյալ հայտարարումը

24. Միության փաստաթղթերի ստորագրումը, իսկության հաստատումը, վավերացումը, ընդունումը, հաստատումը եւ դրանց միանալը
25. Միության փաստաթղթերը վավերացնելու, ընդունելու, հաստատելու եւ դրանց միանալու մասին ծանուցումը
26. Միության համաձայնագրերը չեղյալ հայտարարելը

#### Գլուխ III

#### Միության փաստաթղթերի փոփոխումը

27. Առաջարկություններ ներկայացնելը

**28.** Կանոնադրության փոփոխությունը

**29.** Ընդհանուր կանոնակարգի, Կոնվենցիայի եւ Միության համաձայնագրերի փոփոխությունը

Գլուխ IV

Տարածայնությունների լուծումը

**30.** Արբիտրաժ

Բաժին III

Եզրափակիչ դրույթներ

**31.** Կանոնադրությունն ուժի մեջ մտնելը եւ գործողության ժամկետը

## **Համաշխարհային փոստային միության կանոնադրություն<sup>2</sup>**

(փոփոխված՝ 1969 թվականի Տոկիոյի, 1974 թվականի Լոզանի, 1984 թվականի Համբուրգի, 1989 թվականի Վաշինգտոնի, 1994 թվականի Սեուլի, 1999 թվականի Պեկինի, 2004 թվականի Բուխարեստի, 2008 թվականի 24-րդ Համագումարի, 2016 թվականի Ստամբուլի, 2018 թվականի Ադիս Աբեբայի եւ 2021 թվականի Աբիջանի Լրացուցիչ արձանագրություններով)

### **Նախաբան**

Փոստային ծառայությունների արդյունավետ գործունեության միջոցով ժողովուրդների միջեւ կապերը զարգացնելու եւ մշակութային, սոցիալական եւ տնտեսական ոլորտներում միջազգային համագործակցության բարձր նպատակների ձեռքբերմանն աջակցելու նպատակով պայմանավորվող երկրների կառավարությունների լիազորված ներկայացուցիչներն ընդունեցին սույն Կանոնադրությունը՝ վավերացման, ընդունման կամ հաստատման պայմանով:

**Համաշխարհային փոստային միության (այսուհետ՝ Միություն)** առաքելությունն է խթանել համաշխարհային փոստային ծառայությունների որակյալ, արդյունավետ եւ մատչելի կայուն զարգացումը՝ աշխարհի բնակիչների միջեւ կապերը հեշտացնելու նպատակով՝

- երաշխավորելով փոստային առաքանու ազատ շրջանառությունը փոխկապակցված ցանցերից կազմված միասնական փոստային տարածքում,
- խրախուսելով ընդհանուր արդար չափանիշների ընդունումը եւ տեխնոլոգիաների օգտագործումը,

---

<sup>2</sup> Աբիջանի Համագումարի 39-րդ փաստաթղթի համաձայն՝ տարբեր փոփոխություններ են կատարվել Կանոնադրության անգլերեն տարբերակում՝ գենդերային առումով չեզոք լեզու կիրառելու նպատակով: Պայմանավորված այն հանգամանքով, որ այս խմբագրական փոփոխությունները չեն ազդում պաշտոնական ֆրանսերեն տեքստի վրա, սույն հատորում դրանք չեն նշվում որպես փոփոխություններ:

- ապահովելով շահառուների միջև համագործակցությունը և փոխգործակցությունը,
- խթանելով արդյունավետ տեխնիկական համագործակցությունը,
- ապահովելով հաճախորդների փոփոխվող կարիքների բավարարումը:

## Բաժին I

### Հիմնական դրույթներ

## Գլուխ I

### Ընդհանուր դրույթներ

## Հոդված 1

### Միության գործունեության ոլորտը եւ նպատակները

1. Սույն Կանոնադրությունն ընդունող երկրները փոստային առաքանու փոխադարձ փոխանակման նպատակով կազմում են «Համաշխարհային փոստային միություն» անվանումով միասնական փոստային տարածք միջկառավարական կազմակերպության ներքո: Տարանցման ազատությունը երաշխավորվում է Միության ամբողջ տարածքում՝ Միության փաստաթղթերում եւ **դրա լրացուցիչ արձանագրություններում (այսուհետ միասին՝ Միության փաստաթղթեր)** սահմանված պայմաններով:

2. Միության նպատակն է փոստային ծառայությունների կազմակերպման եւ կատարելագործման ապահովումը եւ այդ բնագավառում միջազգային համագործակցության զարգացումը խթանելը:

3. Միությունն իր հնարավորությունների սահմաններում մասնակցում է փոստային կապի բնագավառում այն տեխնիկական օգնության տրամադրմանը, որի մասին խնդրում են անդամ երկրները:

## Հոդված 2

### Սահմանումները

1. **Միության** փաստաթղթերի նպատակով հետեւյալ եզրույթներն ունեն ստորեւ սահմանված իմաստները.



1.1. Փոստային ծառայություն՝ բոլոր միջազգային ծառայությունները, որոնց գործունեության շրջանակը սահմանվում է կարգավորվում է Միության փաստաթղթերով: Փոստային ծառայությունների հիմնական պարտավորություններն են բավարարել անդամ երկրների որոշակի սոցիալական եւ տնտեսական նպատակները՝ ապահովելով փոստային առաքանու հավաքումը, մշակումը, փոխանցումը եւ առաքումը:

1.2. Անդամ երկիր՝ երկիր, որը բավարարում է Կանոնադրության 3-րդ հոդվածով սահմանված պայմանները:

1.3. Միասնական փոստային տարածք (միեւնույն փոստային տարածքը)՝ Միության փաստաթղթերով պայմանավորվող կողմերի պարտավորությունը՝ առանց խտրականության փոստային առաքանու փոխադարձ փոխանակում, ներառյալ՝ տարանցման ազատություն ապահովելու եւ այլ երկրներից տարանցիկ փոստային առաքանուն իրենց սեփական փոստային առաքանու պես վերաբերվելու մասով՝ Միության փաստաթղթերում նշված պայմաններով:

1.4. Տարանցման ազատություն՝ միջանկյալ անդամ երկրի պարտավորությունը մեկ այլ անդամ երկրի համար ապահովելու իր տարածքով տարանցիկ անցնող փոստային առաքանու փոխադրումը՝ դրա նկատմամբ ապահովելով նույն վերաբերմունքը, ինչ ներքին առաքանու նկատմամբ՝ Միության փաստաթղթերում նշված պայմաններով:

1.5. Փոստային առաքանի՝ անդամ երկրի նշանակած օպերատորի կողմից Համաշխարհային փոստային կոնվենցիայում **(այսուհետ՝ Կոնվենցիա)**, **Միության համաձայնագրերում (ինչպես նշված է Կանոնադրության 21-րդ հոդվածում)** եւ դրանց համապատասխան ընդունված Կանոնակարգերում նկարագրված կարգով առաքվող որեւէ իրին (գրավոր նամակագրություն, փոստային ծանրոց, դրամական փոխանցումներ) վերաբերող ընդհանրական եզրույթ:

1.6. Նշանակված օպերատոր՝ փոստային ծառայությունների շահագործման եւ իր տարածքում Միության փաստաթղթերից բխող

համապատասխան պարտավորությունների կատարման նպատակով անդամ երկրի կողմից պաշտոնապես նշանակված պետական կամ ոչ պետական կազմակերպություն:

1.7. Վերապահում՝ բացառում նախատեսող դրույթ, որով անդամ երկիրը նպատակ ունի բացառելու կամ փոփոխելու որեւէ փաստաթղթի՝ բացառությամբ Կանոնադրության եւ Ընդհանուր կանոնակարգի որեւէ դրույթի իրավական ազդեցությունը տվյալ անդամ երկրի նկատմամբ կիրառման մասով: Ցանկացած վերապահում պետք է համատեղելի լինի Կանոնադրության նախաբանում եւ 1-ին հոդվածում սահմանված Միության խնդիրների եւ նպատակի հետ: Այն պետք է պատշաճ կերպով հիմնավորվի եւ հաստատվի համապատասխան Փաստաթղթի հաստատման համար անհրաժեշտ մեծամասնության կողմից եւ ներառվի դրա Եզրափակիչ արձանագրության մեջ:

### Հոդված 3

#### Բացառիկ հարաբերություններ

#### 1. Միության անդամ երկրներ են՝

1.1. այն երկրները, որոնք սույն Կանոնադրությունն ուժի մեջ մտնելու պահին ունեն անդամ երկրի կարգավիճակ,

1.2. այն երկրները, որոնք անդամ են դարձել ըստ 12-րդ հոդվածի:

### Հոդված 4

#### Միության իրավասությունները

#### 1. Միության իրավասությունների շրջանակում են գտնվում՝

1.1. անդամ երկրների տարածքները,

1.2. Միության մեջ չընդգրկված տարածքներում անդամ երկրների կողմից հիմնված փոստային գրասենյակները,

1.3. այն տարածքները, որոնք, Միության անդամ չհանդիսանալով, ընդգրկված են Միության մեջ, քանի որ փոստային տեսակետից ենթարկվում են անդամ երկրներին:

#### Հոդված 5

##### Բացառիկ հարաբերություններ

Այն անդամ երկրները, որոնց կողմից նշանակված օպերատորները տրամադրում են **փոստային** ծառայություններ Միության մեջ չընդգրկված տարածքների անունից, հանդես են գալիս որպես միջնորդ այլ անդամ երկրների համար: Կոնվենցիայի եւ դրա Կանոնակարգերի դրույթները կիրառելի են այդ բացառիկ հարաբերությունների նկատմամբ:

#### Հոդված 6

##### Միության գտնվելու վայրը

Միության եւ նրա մշտական մարմինների գտնվելու վայրն է Բեռնը:

#### Հոդված 7

##### Միության պաշտոնական լեզուն

Միության պաշտոնական լեզուն ֆրանսերենն է:

#### Հոդված 8

##### Դրամական միավորը

Միության ակտերում օգտագործվող դրամական միավորն Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հաշվարկային միավորն է:

## Հոդված 9

Տարածաշրջանային միություններ: Հատուկ համաձայնագրեր

1. Անդամ երկրները կամ նրանց կողմից նշանակված օպերատորները, եթե այդ երկրների օրենսդրությունը թույլ է տալիս դա, կարող են ստեղծել Տարածաշրջանային միություններ եւ կնքել Հատուկ համաձայնագրեր **փոստային** ծառայության վերաբերյալ՝ պայմանով, որ դրանց մեջ երբեւէ չներառվեն այնպիսի դրույթներ, որոնք պակաս բարենպաստ կլինեն հանրության համար, քան այն Փաստաթղթերով սահմանված դրույթները, որոնց կողմ են հանդիսանում համապատասխան անդամ երկրները:

2. Տարածաշրջանային միությունները կարող են դիտորդներ ուղարկել Համագումարներ, Վարչական խորհուրդ, Փոստային շահագործման խորհուրդ, ինչպես նաեւ Միության կողմից կազմակերպված այլ համաժողովներ եւ ժողովներ:

3. Միությունը կարող է դիտորդներ ուղարկել Տարածաշրջանային միությունների Համագումարներ, համաժողովներ եւ ժողովներ:

## Հոդված 10

Հարաբերությունները Միավորված ազգերի կազմակերպության հետ

Միության եւ Միավորված ազգերի կազմակերպության միջեւ **հարաբերությունները** կարգավորվում են համաձայնագրերով, որոնց տեքստերը կցված են սույն Կանոնադրությանը:

## Հոդված 11

Հարաբերությունները միջազգային կազմակերպությունների հետ

Միջազգային փոստային ծառայության բնագավառում սերտ

համագործակցություն ապահովելու նպատակով Միությունը կարող է համագործակցել այն միջազգային կազմակերպությունների հետ, որոնք Միության հետ հարակից շահեր եւ գործունեություն ունեն:

## Գլուխ II

Միությանը միանալը կամ Միություն ընդունվելը: Միությունից դուրս գալը

## Հոդված 12

Միությանը միանալը կամ Միություն ընդունվելը: Ընթացակարգը

1. Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ կարող է միանալ Միությանը:

2. Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող ցանկացած ինքնիշխան երկիր կարող է դիմել՝ իրեն որպես Միության անդամ երկիր ընդունելու խնդրանքով:

3. Միությանը միանալու կամ Միություն ընդունվելու միջնորդությունը պետք է ներառի Միության Կանոնադրությանը եւ դրա պարտադիր Փաստաթղթերին միանալու մասին պաշտոնական հայտարարություն: Այն համապատասխան երկրի կառավարության կողմից ուղարկվում է Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին, որը, կախված հանգամանքներից, տեղեկացնում է միանալու մասին կամ խորհրդակցում է անդամ երկրների հետ Միություն ընդունվելու վերաբերյալ միջնորդության կապակցությամբ:

4. Միավորված ազգերի կազմակերպության անդամ չհանդիսացող երկիրը համարվում է որպես Միության անդամ երկիր ընդունված, եթե նրա կողմից ներկայացված միջնորդությունը հաստատում են Միության անդամ

երկրների առնվազն երկու երրորդը: Այն անդամ երկրները, որոնց Միջազգային բյուրոն պատասխան չի ստանում խորհրդակցության ամսաթվից հաշված չորս ամսվա ընթացքում, համարվում են ձեռնպահ: **Վերոնշյալ պատասխանները, որոնք Միջազգային բյուրո են ներկայացվում ֆիզիկական կամ անվտանգ էլեկտրոնային միջոցներով, ստորագրվում են համապատասխան անդամ երկրի պետական մարմնի՝ պատշաճ կերպով լիազորված ներկայացուցչի կողմից: Սույն կետի իմաստով՝ «անվտանգ էլեկտրոնային միջոցներ» արտահայտությունը նշանակում է տվյալների մշակման, պահպանման եւ փոխանցման համար օգտագործվող ցանկացած էլեկտրոնային միջոց, որն ապահովում է այդ տվյալների հավաստիության, ամբողջականության եւ գաղտնիության պահպանումն անդամ երկրի կողմից վերը նշված պատասխանների ներկայացման ընթացքում:**

5. Միանալու կամ որպես անդամ երկիր ընդունելու մասին Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենը տեղեկացնում է անդամ երկրների կառավարություններին: Այն ուժի մեջ է մտնում այդ ծանուցման օրվանից:

### Հոդված 13

Միությունից դուրս գալը: Ընթացակարգը

1. Յուրաքանչյուր անդամ երկիր կարող է դուրս գալ Միությունից Կանոնադրությունը չեղյալ հայտարարելու միջոցով՝ այդ մասին տվյալ երկրի կառավարության միջոցով հաղորդելով Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին, որն էլ այնուհետեւ տեղեկացնում է անդամ երկրների կառավարություններին:

2. Միությունից դուրս գալն ուժի մեջ է մտնում **1-ին** կետում նախատեսված չեղյալ հայտարարելու մասին ծանուցումը Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի կողմից **ստանալու** օրվանից մեկ տարի հետո:

### Գլուխ III

#### Միության կառուցվածքը

#### Հոդված 14

##### Միության մարմինները

1. Միության մարմիններն են Համագումարը, Վարչական խորհուրդը, Փոստային շահագործման խորհուրդը եւ Միջազգային բյուրոն:

2. Միության մշտական մարմիններն են Վարչական խորհուրդը, Փոստային շահագործման խորհուրդը եւ Միջազգային բյուրոն:

#### Հոդված 15

##### Համագումարը

1. Համագումարը Միության բարձրագույն մարմինն է:

2. Համագումարը կազմված է անդամ երկրների ներկայացուցիչներից:

#### Հոդված 16

##### Արտահերթ Համագումարը

Արտահերթ Համագումարը կարող է գումարվել Միության անդամ երկրների առնվազն երկու երրորդի միջնորդությամբ կամ համաձայնությամբ:

#### Հոդված 17

##### Վարչական խորհուրդը

1. Համագումարների միջեւ Վարչական խորհուրդը (ՎԽ) ապահովում է Միության աշխատանքների անընդհատությունը՝ Միության փաստաթղթերի

դրույթների համաձայն:

2. Վարչական խորհրդի անդամներն իրենց գործառույթները կատարում են Միության անունից եւ հիմք ընդունելով դրա շահերը:

#### Հոդված 18

Փոստային շահագործման խորհուրդը

1. Փոստային շահագործման խորհուրդը (ՓՇԽ) պատասխանատու է փոստային ծառայությանը վերաբերող՝ շահագործման, առեւտրային, տեխնիկական եւ տնտեսական բնույթի հարցերի համար:

2. Փոստային շահագործման խորհրդի անդամները կատարում են իրենց գործառույթները Միության անունից եւ հիմք ընդունելով դրա շահերը:

#### Հոդված 19

Միջազգային բյուրոն

Միության գտնվելու վայրում գործող՝ Համաշխարհային փոստային միության Միջազգային բյուրոյի կենտրոնական գրասենյակը, որը ղեկավարվում է գլխավոր տնօրենի կողմից եւ վերահսկվում է Վարչական խորհրդի կողմից, ծառայում է որպես գործադիր, օժանդակող, կապի, տեղեկատվության եւ խորհրդատվության մարմին:

#### Հոդված 20

Միության ծախսերը: Անդամ երկրների անդամավճարները

1. Յուրաքանչյուր Համագումար սահմանում է առավելագույն գումարը, որին կարող են հասնել՝



1.1. Միության ամենամյա ծախսերը,

1.2. հաջորդ Համագումարի կազմակերպման հետ կապված ծախսերը:

2. 1-ին կետում նախատեսված ծախսերի առավելագույն գումարը կարող է գերազանցվել, եթե դա են պահանջում հանգամանքները՝ Ընդհանուր կանոնակարգի համապատասխան դրույթները պահպանելու պայմանով:

3. Միության ծախսերը, անհրաժեշտության դեպքում ներառելով նաև 2-րդ կետով նախատեսված ծախսերը, համատեղ հոգում են Միության անդամ երկրները: Այդ նպատակով յուրաքանչյուր անդամ երկիր ընտրում է անդամավճարի այն դասը, որում ցանկանում է ներառվել՝ **հաշվի առնելով Ընդհանուր կանոնակարգով սահմանված համապատասխան դրույթները:**

4. **12-րդ** հոդվածի հիման վրա Միությանը միանալու կամ դրա մեջ ընդունվելու դեպքում համապատասխան երկիրն **ընտրում է** անդամավճարի այն դասը, որում ինքը ցանկանում է ներառվել Միության ծախսերի բաշխման նպատակով՝ **հավասարապես հաշվի առնելով Ընդհանուր կանոնակարգով սահմանված համապատասխան դրույթները:**

## Բաժին II

### Միության փաստաթղթերը

#### Գլուխ I

#### Ընդհանուր դրույթներ

### Հոդված 21

#### Միության փաստաթղթերը

1. Կանոնադրությունը Միության հիմնական փաստաթուղթն է: Այն պարունակում է Միության հիմնական կանոնները եւ ենթակա չէ վերապահումների:

2. Ընդհանուր կանոնակարգը ներառում է դրույթներ, որոնք ապահովում են Միության Կանոնադրության կիրառումը եւ գործունեությունը: Այն պարտադիր է բոլոր անդամ երկրների համար եւ ենթակա չէ վերապահումների:

3. **Կոնվենցիան** եւ դրա Կանոնակարգերը ներառում են կանոններ, որոնք կիրառելի են ամբողջ **փոստային ծառայության** նկատմամբ: **Այս** Փաստաթղթերը պարտադիր են բոլոր անդամ երկրների համար: Անդամ երկրները պետք է ապահովեն իրենց նշանակած օպերատորների կողմից Կոնվենցիայից եւ դրա Կանոնակարգերից բխող պարտավորությունների կատարումը:

4. Միության համաձայնագրերը եւ դրանց Կանոնակարգերը **համապատասխանաբար սահմանում եւ** կարգավորում են այն անդամ երկրների միջեւ ծառայությունները՝ բացառությամբ այն **Կոնվենցիայով եւ դրա Կանոնակարգերով սահմանված եւ կարգավորվող ծառայությունների**, որոնց կողմ են այդ երկրները: Դրանք պարտադիր են միայն այդ երկրների համար: Ստորագրող անդամ երկրները պետք է ապահովեն իրենց նշանակած

օպերատորների կողմից **Միության** համաձայնագրերից եւ դրանց Կանոնակարգերից բխող պարտավորությունների կատարումը:

5. Կանոնակարգերը, որոնք պարունակում են Կոնվենցիայի եւ **Միության** համաձայնագրերի կատարման համար անհրաժեշտ կիրառման կանոններ, մշակվում են Փոստային շահագործման խորհրդի կողմից՝ հաշվի առնելով Համագումարի կողմից ընդունված որոշումները:

6. 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերում նշված՝ Միության փաստաթղթերին կցվող Եզրափակիչ արձանագրությունները պարունակում են այդ Փաստաթղթերի վերաբերյալ վերապահումները:

## Հոդված 22

Միության փաստաթղթերի կիրառումն այն տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է անդամ երկիրը

1. Յուրաքանչյուր երկիր ցանկացած պահի կարող է հայտարարել, որ իր կողմից Միության փաստաթղթերի ընդունումը տարածվում է այն բոլոր տարածքների կամ դրանց մի մասի վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:

2. 1-ին կետում նախատեսված հայտարարությունը պետք է ուղարկվի Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին:

3. Յուրաքանչյուր անդամ երկիր ցանկացած պահի կարող է Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին ծանուցում ուղարկել Միության այն փաստաթղթերը չեղյալ հայտարարելու իր մտադրության մասին, որոնց վերաբերյալ նա արել է 1-ին կետում նախատեսված հայտարարությունը: Այդ ծանուցումն ուժի մեջ է մտնում Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի կողմից այն ստանալու օրվանից մեկ տարի հետո:

4. 1-ին եւ 3-րդ կետերում նախատեսված հայտարարությունների եւ ծանուցումների մասին անդամ երկրներին տեղեկացնում է Միջազգային բյուրոյի

գլխավոր տնօրենը:

5. 1-4-րդ կետերը չեն կիրառվում այն տարածքների նկատմամբ, որոնք Միության անդամ երկիր են, եւ որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է անդամ երկիրը:

### Հոդված 23

Ազգային օրենսդրությունը

Միության փաստաթղթերի դրույթները չեն կարող խախտել ցանկացած անդամ երկրի օրենսդրությունն այն ամենում, ինչը հստակորեն նախատեսված չէ տվյալ Փաստաթղթերով:

### Գլուխ II

Միության փաստաթղթերի ընդունումը եւ չեղյալ հայտարարումը

### Հոդված 24

Միության փաստաթղթերի ստորագրումը, իսկության հաստատումը, վավերացումը, **ընդունումը**, հաստատումը եւ դրանց **միանալը**

1. Համագումարում ընդունված Միության փաստաթղթերը ստորագրվում են անդամ երկրների լիազորված ներկայացուցիչների կողմից:

2. Կանոնակարգերի իսկությունը հաստատվում է Փոստային շահագործման խորհրդի նախագահի եւ գլխավոր քարտուղարի կողմից:

3. Ստորագրող անդամ երկրները հնարավորինս կարճ ժամկետում վավերացնում, **ընդունում կամ հաստատում են Միության փաստաթղթերը՝ համաձայն իրենց համապատասխան սահմանադրական կարգավորումների:**

4. Եթե որեւէ անդամ երկիր չի վավերացնում, **ընդունում կամ հաստատում իր կողմից ստորագրված Միության փաստաթղթերը**, ապա այդ Փաստաթղթերը, այնուհանդերձ, պարտադիր են այն անդամ երկրների համար, որոնք դրանք վավերացրել, **ընդունել** կամ հաստատել են:

5. **Անդամ երկրները ցանկացած պահի կարող են միանալ Միության այն փաստաթղթերին, որոնք իրենք չեն ստորագրել՝ Համագումարների գործունեության կարգում սահմանված համապատասխան ընթացակարգերի համաձայն:**

6. **Միության փաստաթղթերին անդամ երկրների միանալու մասին ծանուցվում է 25-րդ հոդվածի համաձայն:**

Հոդված 25

Միության փաստաթղթերը վավերացնելու, **ընդունելու**, հաստատելու եւ **դրանց միանալու** մասին ծանուցումը

Միության **փաստաթղթերը** վավերացնելու, **ընդունելու**, **հաստատելու եւ դրանց միանալու** մասին փաստաթղթերը հնարավորինս կարճ ժամկետում ի պահ են հանձնվում Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին, որն այդ մասին ծանուցում է անդամ երկրների կառավարություններին:

Հոդված 26

**Միության համաձայնագրերը** չեղյալ հայտարարելը

Յուրաքանչյուր անդամ երկիր կարող է դադարեցնել իր մասնակցությունը **Միության** մեկ կամ մի քանի Համաձայնագրերի՝ 13-րդ հոդվածով նախատեսված պայմանների **անալոգիային** համապատասխան:

### Գլուխ III

#### Միության փաստաթղթերի փոփոխումը

##### Հոդված 27

###### Առաջարկություններ ներկայացնելը

1. Անդամ երկիրը կա՛մ Համագումարի ընթացքում, կա՛մ Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում իրավունք ունի ներկայացնելու Միության այն փաստաթղթերին վերաբերող առաջարկություններ, որոնց կողմ է հանդիսանում:

2. Այնուամենայնիվ, Կանոնադրությանը եւ Ընդհանուր կանոնակարգին վերաբերող առաջարկությունները կարող են ներկայացվել միայն Համագումարի քննարկմանը:

3. Բացի այդ, Կանոնակարգերին վերաբերող առաջարկությունները **ներկայացվում են** Փոստային շահագործման խորհրդին՝ Միջազգային **բյուրոյի միջոցով**:

##### Հոդված 28

###### Կանոնադրության փոփոխությունը

1. Համագումարին ներկայացված եւ սույն Կանոնադրությանը վերաբերող առաջարկություններն ընդունվում են Միության՝ քվեարկելու իրավունք ունեցող անդամ երկրների առնվազն երկու երրորդի ձայներով:

2. Կանոնադրության՝ Համագումարի կողմից ընդունված փոփոխությունների հիման վրա կազմվում է լրացուցիչ արձանագրություն, որն ուժի մեջ է մտնում նույն Համագումարի կողմից որոշված՝ այդ արձանագրության մեջ նշված ամսաթվին: **Զխախտելով 21.1 հոդվածով նախատեսված կարգով**

Կանոնադրության պարտադիր բնույթը՝ անդամ երկրները հնարավորինս շուտ վավերացնում, հաստատում, ընդունում են նշված փոփոխությունները կամ միանում են դրանց: Այդ վավերացման, հաստատման, ընդունման կամ միանալու մասին փաստաթղթերը դիտարկվում են 25-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն:

#### Հոդված 29

Ընդհանուր կանոնակարգի, Կոնվենցիայի եւ Միության համաձայնագրերի փոփոխությունը

1. Ընդհանուր կանոնակարգով, Կոնվենցիայով եւ Միության համաձայնագրերով սահմանվում են այն պայմանները, որոնք պետք է կատարել դրանց վերաբերող առաջարկությունների ընդունման համար:

2. Ընդհանուր կանոնակարգի, Կոնվենցիայի եւ Միության համաձայնագրերի փոփոխությունների հիման վրա կազմվում է լրացուցիչ արձանագրություն, որն ուժի մեջ է մտնում նույն Համագումարի կողմից որոշված՝ այդ արձանագրության մեջ նշված ամսաթվին: Չխախտելով 21-րդ հոդվածով նախատեսված կարգով Միության վերոնշյալ փաստաթղթերի պարտադիր բնույթը՝ անդամ երկրները հնարավորինս շուտ վավերացնում, հաստատում, ընդունում են նշված փոփոխությունները կամ միանում են դրանց: Այդ վավերացման, հաստատման, ընդունման կամ միանալու մասին փաստաթղթերի նկատմամբ կիրառվում են 25-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերը: Սույն դրույթները, *mutatis mutandis*, կիրառվում են նաեւ Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածում ընդունված Կանոնադրության եւ Միության համաձայնագրերի ցանկացած փոփոխության նկատմամբ:

## Գլուխ IV

### Տարածայնությունների լուծումը

#### Հոդված 30

##### Արբիտրաժ

Երկու կամ մի քանի անդամ երկրների միջև Միության փաստաթղթերի մեկնաբանմանը կամ այդ Փաստաթղթերի կիրառումից անդամ երկրի համար առաջացող պատասխանատվությանը վերաբերող տարածայնությունների դեպքում վիճելի հարցը լուծվում է արբիտրաժի միջոցով:

## Բաժին III

### Եզրափակիչ դրույթներ

#### Հոդված 31

##### Կանոնադրությունն ուժի մեջ մտնելը եւ գործողության ժամկետը

Սույն Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում 1966 թվականի հունվարի 1-ին եւ ուժի մեջ է մնում անորոշ ժամկետով:

Ի հաստատումն որի՝ պայմանավորվող երկրների Կառավարությունների լիազորված ներկայացուցիչները ստորագրեցին սույն Կանոնադրությունը մեկ օրինակով, որը կպահվի Միության գտնվելու երկրի Կառավարության արխիվներում: Դրա պատճենը յուրաքանչյուր **անդամ երկրի** կփոխանցվի **Միության** Միջազգային բյուրոյի կողմից:

Կատարված է Վիեննայում 1964 թվականի հուլիսի 10-ին: